

ԽՈՐԴՈՏՈՄԻԱՅԻ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Ուռուցքային ախտահարումներով հիվանդներին, որոնց մոտ ցավային համախտանիշը խիստ արտահայտված է և չի անցնում նույնիսկ թմրաբեր ցավազրկողներ օգտագործելիս, ցավը թեթևացնելու նպատակով առաջարկում ենք ԿՏ-հսկողությամբ կատարվող մաշկանց խորդոտումիա: Միջամտության էությունը կայանում է ողնուղեղի վերին պարանոցային մակարդակում (C₁-C₂) սպինոթալամիկ ուղու զգացողական նյարդաթելերի դեներվացիայի մեջ: Մրա հետևանքով մարմնի մի կեսի զգայողությունը նվազում է կամ վերանում, ուստիև ուռուցքից առաջ եկած ցավային գրգիռները չեն փոխանցվում դեպի գլխուղեղ, և հիվանդը ձերբազատվում է ցավից: Խորդոտումիայի ազդեցությունը 6-12 ամիս է: Այն իրականացվում է տեղային և երակային անզգայացման պայմաններում: Ըստ գրականության տվյալների՝ միջամտության արդյունավետությունը կազմում է 80-85%: Սակայն հնարավոր է նաև քիչ արդյունավետությամբ կամ անարդյունավետ ելքով միջամտություններ:

Հնարավոր բարդություններն են համարվում ողնուղեղի վնասումը, կաթվածը, մարմնի մի կեսի վերջույթների թուլությունը, կոնքի օրգանների գործունեության խանգարումը:

Չնայած վերը նշված հնարավոր բարդություններին՝ այս միջամտությունը համարվում է արդյունավետ և լայն կիրառում ունի, ինչպես նաև համարվում է դեղորայքային միջամտությանը չենթարկվող ցավային համախտանիշի բուժման արդյունավետ մեթոդ: Նախքան միջամտությունը՝ խնդրում ենք քննարկել բոլոր հարցերը բժիշկի հետ:

Մույնով տալիս եմ իմ համաձայնությունը խորդոտումիային, ծանուցված եմ հնարավոր բոլոր բարդությունների մասին:

հիվանդի անուն, ազգանուն

ստորագրություն

ամիս, ամսաթիվ

ՓՈՔՐ ՉԱՓԵՐԻ ՄԻՋՈՂԱՅԻՆ ԱՃԱՌԻ ՃՈՂՎԱԾՔՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ ՑԱՎԱՅԻՆ ՀԱՄԱԽՏԱՆԻՇԻ ԲՈՒԺՈՒՄԸ COSMAN RF-Ի ՄԻՋՈՑՈՎ

Cosman RF-ի միջոցով կարելի է բուժել հիվանդների, ում մոտ ցավային համախտանիշը պայմանավորված է փոքր չափերի միջոդային աճառի ճողվածքներով: Առաջարկվող միջամտությունը կատարվում է համակարգչային հսկողության պայմաններում, տեղային ցավազրկումով: Ասեղը մտցվում է միջոդային աճառի այն հատվածի մեջ, որը սեղմում է նյարդարմատը: Միջամտության անվտանգությունը ապահովվում է մշտական համակարգչային հետազոտմամբ (ԿՏ): Հասնելով թիրախին՝ միացվում է պուլսիացիոն էլեկտրոալիքը, որի արդյունքում արտագատվում է ջերմային էներգիա (առավելագույնը 42° C) 120 վրկ տևողությամբ: Սրա հետևանքով դադարեցվում է ցավային ազդակների փոխանցումը նյարդով:

Այսինքն, պահպանելով նյարդի շարժողական և զգացողական ֆունկցիան, վերացվում է նրա այն հատվածը, որը պատասխանատու է ցավի փոխանցման համար: Ճողվածքը մնում է անփոփոխ: Նրա կնճռոտման համար հետագայում ցուցված է հատուկ բուժում: Միջամտության ավարտին ներարկվում է նաև հորմոնային դեղամիջոց, որը հանում է նյարդի այտուցը և նախատրամադրում արագ ապաքինմանը: Քանի որ միջամտությունը կատարվում է տեղային անզգայացման պայմաններում, հնարավոր է ժամանակավոր (1-1.5ժ) թուլություն կամ թմրածություն ուղղում:

Ըստ գրականության տվյալների՝ միջամտության արդյունավետությունը մոտ 80% է, այն ունի թե՛ բուժական, թե՛ ախտորոշիչ նշանակություն: Բարդությունները, կապված բորբոքման, նյարդարմատիկի վնասման և այլ, նկարագրված են 0.1% դեպքերում:

Խնդրում ենք Ձեզ լինել ուշադիր, քանի որ միջամտությունը հակացուցված է եթե Դուք ունեք ալերգիա լիդոկայինի կամ օգտագործվող այլ դեղորայքի նկատմամբ, կամ եթե Ձեզ մոտ տեղադրված է սրտի ռիթմի ուղղորդիչ (պեյսմեյքեր), քանի որ միջամտության վերջում ներարկվում է հորմոնային դեղամիջոց, այն կարող է պատճառ դառնալ արյան մեջ գլյուկոզայի քանակի բարձրացման կամ զարկերակային ճնշման բարձրացման: Եթե ունեք նման որևէ ուղեկցող հիվանդություն, ապա մինչ միջամտությունը և դրանից հետո, խորհրդակցեք Ձեր բուժումն իրականացնող թերապևտի հետ: Հակացուցում է համարվում նաև մակարդելիոսիտոսիսի խանգարումներով ընթացող հիվանդությունների առկայությունը (հեմոֆիլիա, տրոմբոցիտոպենիա և այլն):

Միջամտության արդյունավետությունը պայմանավորված է մի շարք անհատական տվյալներով և միջինում կազմում է մոտ 80%, ունի հարաճուն ընթացք, այսինքն՝ հասնում է իր գագաթնակետին առաջիկա երեք ամսվա ընթացքում: Սակայն հնարավոր չէ բացառել քիչ արդյունավետ և անարդյունավետ ելքերը:

Եթե Դուք ունեք որևէ հիվանդություն և այդ նպատակով ստանում եք դեղորայքային բուժում, խնդրում ենք Ձեզ նախքան միջամտությունը խորհրդակցել Ձեր բուժումը հսկող մասնագետի հետ և քննարկել Ձեր դեղորայքի ընդունման կամ դադարեցման հարցը և միջամտության հնարավոր ազդեցությունը Ձեր դեղորայքային բուժման, հիվանդության ընթացքի վրա:

Սույնով տալիս եմ իմ համաձայնությունը միջամտության, ծանուցված եմ հնարավոր բոլոր բարդությունների, ելքերի մասին:

հիվանդի անուն, ազգանուն

ստորագրություն

ամիս, ամսաթիվ

**ՈՂՆԱՇԱՐԻ ՊԱՐԱՆՈՑԱՅԻՆ ԿԱՍ ԳՈՏԿԱՍՐԲԱՆԱՅԻՆ ՀԱՏՎԱԾԻ ՑԱՎԻ ԴԵՊՔՈՒՄ
ՑԱՎԱՅԻՆ ՀԱՄԱԽՏԱՆԻՇԻ ԲՈՒԺՈՒՄԸ COSMAN RF-Ի ՄԻՋՈՑՈՎ**

Ողնաշարի պարանոցային կամ գոտկասրբանային հատվածի ցավը, որը հետևանք է սպոնդիլոարթրոզի (ողնաշարի հոդերի բորբոքման), ինչի հետևանքով կաշկանդվում է շարժումների ծավալը ողնաշարում, առաջ է բերում մշտական լարվածություն, ցավի զգացում: Բուժումն առաջարկում ենք իրականացնել Cosman RF տեխնոլոգիայի օգնությամբ: Այսպես, ռենտգեն հսկողության տակ դեպի ախտահարված հոդազվիկներ տեղադրվում են հատուկ էլեկտրոդներ: Այս ամենը կատարվում է վիրահատարանում, ռենտգեն հսկողության տակ: Էլեկտրոդների ճիշտ դիրքը որոշվում է սոխիմուլիացիայի փորձով, որի ժամանակ վերացվում է ցավի զգացումը և որից հետո կատարվում է դեներվացիա, ինչի հետևանքով վերանում է ցավի զգացումը: Որպես կանոն միաժամանակ կատարվում է չորս հոդերի դեներվացիա: Հիմնական արդյունքը ի հայտ է գալիս առաջիկա ամիսների ընթացքում, որից հետո այն ամրապնդելու համար ցուցված է բուժական ֆիզիոլոգիա և որոշ ֆիզիոթերապևտիկ բուժում:

Այս միջամտության արդյունավետությունը, ըստ միջազգային տվյալների, մոտ 80% է, սակայն անարդյունավետ կամ քիչ արդյունավետ ելքերը հնարավոր չէ բացառել: Ներոլոգիական բարդությունների հավանականությունը ըստ գրականության տվյալների չի գերազանցում 0,1%-ը:

Խնդրում եմ լինել ուշադիր: Միջամտությունը կատարվում է լիդոկայինի տեղային անզգայացման պայմաններում: Այն հակացուցված է հիվանդներին, որոնց մոտ կա ալերգիա լիդոկայինի կամ օգտագործվող այլ դեղորայքի նկատմամբ: Բացի այդ, այն հակացուցված է անձանց, ում մոտ տեղադրված է սրտի ռիթմի վերարտադրող սարք (պեյսմեյքեր):

Խնդրում եմ լինել ուշադիր և մինչ միջամտությունը Ձեզ հուզող բոլոր հարցերը քննարկել բժիշկի հետ: Եթե Դուք ունեք որևէ հիվանդություն և այդ նպատակով ստանում եք դեղորայքային բուժում, ապա խնդրում ենք Ձեզ նախքան միջամտությունը խորհրդակցել Ձեր բուժումը հսկող մասնագետի հետ և քննարկել Ձեր դեղորայքի ընդունման կամ դադարեցման հարցը և միջամտության հնարավոր ազդեցությունը Ձեր դեղորայքային բուժման, հիվանդության ընթացքի վրա:

Սույնով տալիս եմ իմ համաձայնությունը միջամտության, ծանուցված եմ հնարավոր բոլոր բարդությունների, ելքերի մասին:

հիվանդի անուն, ազգանուն

ստորագրություն

ամիս, ամսաթիվ